

Պողոսյան-Խաղբակյան Գ. Հ. Ենոքավան գյուղի եւ Սառնաջուր գետահովտի պատմաճարտարապետական հուշարձանները: Գիտարշավների նյութեր: / Գ. Հ. Պողոսյան-Խաղբակյան; Խմբ.՝ Հ. Միմոնյան. – Եր.: Սեվծովյան-Կասայան տարածաշրջանի քաղաքական և սոցիալական հետազոտությունների հանրային ինստիտուտ, 2024. – 110 էջ, 4 գծագիր, 164 լուս., 1 ներդիր: (Նյութեր «Խորան»-ի ուսումնասիրությունների. Պրակ Բ):

EDN: ASYAQN

Գագիկ Պողոսյան-Խաղբակյանի «Նյութեր «Խորան»-ի ուսումնասիրությունների» հերթական երկրորդ պրակը նվիրված է նշված ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ենոքավան գյուղի և Սառնաջուր գետահովտի տարածքում 1991 և 1996 թթ. իրականացված դաշտային աշխատանքների արդյունքների ներկայացմանը, ինչպես նաև հետագա տարիներին կատարված կամերալ պրպտումների շնորհիվ արխիվային ու այլ տվյալներ ուսումնասիրությանը:

Ներկայացվող գիտական այս աշխատությունը լույս է սփռում պատմականորեն քիչ ուսումնասիրված մեր Հայրենիքի հերթական մի փոքր հատվածի վրա: Առավել արժեքավոր է այն, որ հեղինակը անմիջականորեն մասնակից լինելով արշավախմբերին, անցել է այդ տեղանքով և իր իսկ աչքերով տեսել և ուսումնասիրել է ներկայացվող պատմամշակութային հուշարձանները, իսկ որոշ դեպքերում, կատարել այդ հուշարձանների չափագրություններն և մաքրման աշխատանքները: Սույն աշխատանքը կարևոր է նաև այն տեսանկյունից, որ վերցված է ոչ մեծ տարածք, որն էլ թույլ է տալիս ավելի մանրամասն տալ տեղանքի պատմամշակութային հուշարձանների նկարագրությունը, գծագրերն ու չափագրությունները, ինչպես նաև վեր հանել պատմական հիշողության մեջ մնացած տեղեկությունները: Հեղինակն ամենայն մանրամասնությամբ ու բժախնդրությամբ ներկայացնում է Սառնաջուր գետահովտի տարածքում տարբեր հատվածներում և տարբեր տարիներին «Խորան»-ի արշավախմբերի կողմից կատարված աշխատանքների ընթացքը: Աշխատության զգալի մաս կազմող կամերալ պրպտումների շնորհիվ, ի հայտ են բերվել բոլոր հնարավոր աղբյուրները, որոնք կապ ունեն ուսումնասիրվող տարածաշրջանի հետ: Մի քանի հեղինակի կոմպիլյատիվ աշխատանքներում նշվել են տեղ գտած անճշտությունները:

Գիրքն արժեքավոր է նաև ներկայացված հուշարձանների տեղանունների ծագման, անվան ստուգաբանության մասին ճշտված տեղեկություններ հաղորդելու առումով: Առաջին իսկ էջերում, երբ հեղինակը ծանոթացնում է տեղանքին, տալով նրա նկարագրությունը՝ հանդիպում ենք վերջին 150 տարվա ընդգրկում կատարված բազմաթիվ վերանվանումների, որոնք հեզհեզ կերպով մանրամասնորեն ներկայացնում է, հետագայում շփոթություններից խուսափելու համար: Նկատելի գայրություն, հեղինակը անրադառնում է ՀՀ կառավարությանն ամրնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 2007 թ. հրատարակված «ՀՀ Ֆիզիկաաշխարհագրական օբյեկտների համառոտ տեղեկատու-բառարան»-ի անփույթ հրատարակությանը:

Անհրաժեշտ է նշել նաև, որ այս գիտական, բայց հանրամտչելի լեզվով գրված գրքույկը, հագեցված է արշավախբերի ժամանակակից բազմաթիվ լուսանկարներով, ինչը անշուշտ հարստացնում է աշխատանքը և ընթերցվում է հետաքրքրությամբ: Իսկ ներկայացված այդ լուսանկարներում արշավախբերի անդամները, ստեղծում են անմիջականության մթնոլորտ:

Քանի որ սա «Խորան» կազմակերպության առաջին աշխատանքը չէ և խումբը, ինչպես և կազմակերպության ղեկավար Գագիկ Պողոսյան-Խաղբակյանը այս տիպի աշխատանքների երկարամյա փորձ ունի, ապա նման ամբողջական աշխատանքի հրատարակումը միայն ողջունելի է:



«Ենթադրյալ գյուղի և Սառնաջուր գետահովտի պատմաճարտարապետական հուշարձանները. 1991, 1996 թթ. գիտարշավների նյութեր» աշխատությունը փոքրածավալ լինելով հանդերձ, կատարված է մեծ բարեխղճությամբ, գրագետ լեզվով, փաստացի-գտածո և մատենագրական հարուստ նյութերի հիման վրա, վիճակական և գրավոր սկզբնաղբյուրների մանրագննին ուսումնասիրությամբ ու համադրությամբ: Այն կարևոր տեղեկություններ է պարունակում ոչ միայն Ենթադրյալ-Քրդևանի, Տանձուտի ու Սառնաջուր գետահովտի պատմության և հուշարձանների, այլև արժևորվում է Մեծ Հայքի Գուգարաց աշխարհի Կայան գավառի բազմադարյան պատմության ու մշակույթի տարաբնույթ հարցերի հետագա ուսումնասիրության առումով:

Տավուշի մարզի Ենթադրյալ գյուղի և Սառնաջուր գետահովտի տարածքի պատմամշակութային հուշարձաններին նվիրված Գագիկ Պողոսյան-Խաղբակյանի այս ուսումնասիրությունն, անշուշտ, արժանի է հրատարակության և օգտակար կարող է լինել ոչ միայն հնագետներին, արվեստաբաններին, պատմաբաններին, այլև արվեստասեր հանրության լայն շրջանակների համար:

պ.գ.դ., պրոֆեսոր *Սուրեն Սարգսյան*

Сдана/Հանձնվել է՝ 05.08.2024

Рецензирована/Գրախոսվել է՝ 12.08.2024

Принята/Ընդունվել է՝ 19.08.2024